անգամ այլ եթէ ժամանակ պատերազմի ամենայն աւուր մի անգամ։

## ԳԼՈՒԽ ՅԼԷ.

Ոչ ոք այր 'ի որում կոչում կոչեցեալ իցէ, և ոչ զէն և ոչ կերակուր և ոչ գանձ, և ոչ անասուն և ոչինչ ելցէ 'ի բանակէ առանց թղթոյ հրամանի սպարապետին բանակին, զոր ինչ առանց հրամանի արգելցի 'ի շրջակայ պահակաց մինչ գտցի հրաման ելանելոյ։

## ԳԼՈՒԽ ՅԼԸ.

Ամենայն գիր մտանող 'ի բանակն հարկաւոր է մտցի 'ի առեն և 'ի տեսչութիւն սպարապետին և ամենայն գիր ելանող բանակէ հարկաւոր է ելանել հրամանաւ սպարապետին, և զամենայն զոր ինչ գրեցեալք եթէ արտաքոյ մտեալ 'ի բանակս, և եթէ 'ի բանակէ ելանող առ այլ յաշխարհ, սպարապետն ունի իշխանութիւն բանալոյ և կարդալոյ եթէ ունիցի երկմտութիւն ինչ 'ի վերայ գրէրոնցն, եթէ գտցի անարատ 'ի երկմտութենէ իւրմէ՝ իւրով կնքաւ կնքեալ յղեսցէ առ 'ի առաջադրեալ տեղի գրոյն տեառն իւրոյ ուր և իցէ։

## ԳԼՈՒԽ ՅԼԹ.

Ամենայն զօրագլուխ հարկաւոր է պահել